# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## Հայոց լեզու և գրականություն

**Թեմա՝** Գնահատման տարբեր եղանակները, դրանց առավելություններն ու թերությունները

**Կազմեց՝** Աննա Սարգսյանը

**Դավիթբեկի միջնակարգ դպրոց**

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

**‘Կապանի N2 ավագ դպրոց’ ՊՈԱԿ**

**Կապան 2022**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ……4

**ԳԼՈՒԽ 1**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԴՐԱ ՁԵՎԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ……7

**ԳԼՈՒԽ 2**

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ……14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……21

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……23

ՀԱՎԵԼՎԱԾ……24

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

***Մենք գնահատում ենք ոչ թե մարդուն, այլ նրա մտքերն ու ձեռքբերումները:***

***Արսեն Վենգեր***

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է[1]: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: «Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով[2]: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել գնահատման տարբեր եղանակները, անդրադառնալ դրանց առավելություններին ու թերություններին:

Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել թեմային առնչվող գիտաուսումնական գրականությունը, անդրադառնալ գնահատման համակարգում տեղի ունեցած փոփոխություններին, փորձարկել դրանք և համեմատել դրանց վերջնարդյունքները:

[1]Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004
[2]Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ժամանակակից առանձին հոգեբաններ և մանկավարժ-գիտնականներ առաջարկում են սովորողների ուսման առաջադիմության գնահատման համար բալայինհամակարգեր ստեղծել ըստ ուսումնական առարկաների: Նրանք այսպես են պատճառաբանում, քանի որ յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի իր առանձնահատկությունները, հենց դա էլ հուշում է յուրաքանչյուր ուսումնական առարկայի համար գնահատման հատուկ համակարգ մշակել: Այսպիսի միտումը սխալ է: Աներևակայելի է, թե ինչ դժվարություններ կսեղծվեն ուսուցիչների և աշակերտների համար:

Առանձին մանկավարժ-գիտնականներ գտնում են, որ աշակերտների մտավոր մակարդակները, նրանց յուրացրած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների չափը, ծավալը, դրանց կիրառումը կյանքում, պրակտիկայում և այլն, կարելի է որոշել ոչ թե բալերով, այլ գիտական հասկացություններին, փաստերին, տեսություններին, օրինաչափություններին, օրենքներին, մեթոդներին տիրապետելու չափանիշնեչով: Այսինքն ՝ թե սովորողները որքանով են դրանք ըմբռնել, հասկացել:

Գիտնականների մի այլ խումբ այն կարծիքին է, որ նշված նորմատիվները չեն կարող արտահայտել սովորողների ձեռք բերած գիտելիքների չափը, ծավալը, խորությունը, մակարդակները: Ասենք թե այդ պարամետրերով առաջնորդվելիս սովորողներից մեկը ցուցաբերում է գերազանցին կամ լավին համարժեք գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, սակայն մեզ անհայտ կմնան շատ փաստեր, օրինակ, ինչպես Պ. Պիդկասիստին է նշում՝ հնարավոր չէ թափանցել աշակերտի խելքի տիրույթ և ստույգ իմանալ, թե որքան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունի նա:

Առանձին գիտնականներ էլ առաջարկում են գործող բալային համակարգի փոխարեն կիրառել գիտելիքների գնահատման խոսքային ձևը: Այսինքն՝ գնահատական չնշանակել: Այդ կարծիքին է Շ. Ամոնաշվիլին: Արտասահմանյան մի շարք երկրներում ( ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա և այլն) մանկավարժ գիտնականները և հոգեբանները կատարում են որոնումներ՝ թվանշանային գնահատականից հրաժարվելու համար, սակայն առայժմ հաջողության չեն հասել:

Ուսումնական գործընթացում գնահատումը քանակական ու որակական տվյալների նպատակային հավաքումն է: Ուսուցիչների համար գնահատման նպատակը, սովորաբար, սովորողների ձեռքբերումների հետ կապված որոշումներ կայացնելն է: Օրինակ՝ ուսուցումից հետո ուսուցիչը հայտորոշում է սովորողների առջև ծառացած դժվարությունները, փորձում է դրանք վերացնել և ապա կատարում է յուրացման աստիճանի ստուգում: Դասարանի ձեռքբերումների մակարդակը պարզելուց հետո, ելնելով սովորողների՝ արդեն ձեռք բերած գիտելիքներից, նա ընտրում է ուսուցումը շարունակելու ճիշտ տեղը:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության նպատակի որ աստիճանին է հասել սովորողը: Այդ տեղեկությունների համար աղբյուր են գրավոր թեստերի արդյունքները, տնային առաջադրանքի կատարման մակարդակը, լաբորատոր և այլ գործնական, հետազոտական բնույթի գրավոր աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, թեմատիկ միավորային աշխատանքները և այլն:

Մեր հանրակրթության մեջ գնահատման նոր համակարգի ներդրումը ենթադրում է «գնահատում» հասկացության իմաստի ընդլայնում: Գնահատումն այսօր արդեն չի կարելի դիտել որպես ուսուցման պրոցեսի մի հավելված, այն համալիր կրթական գործընթաց է, որ կոչված է տեղեկություններ տալու ուսուցման որակի և նրա զարգացման դինամիկայի մասին:

Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ ուսումնական գործունեության և արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Իր այս գործառույթից զատ այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորել ուուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ: Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնահիրացմանը:

Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք

սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի սուբյեկտ: Աշակերտն իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա, թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակներին:

# ԳԼՈՒԽ 1

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԴՐԱ ՁԵՎԵՐԸ, ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հանրակրթական պետական չափորոշիչը սահմանում է. ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողուանկությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման[3]:

Ըստ նպատակների գնահատման ձևերը հետևյալն են.

- *Սովորողի ուսումնառության ունակությունների բացահայտում:* Այս գնահատման նպատակն է՝ բացահայտել երեխայի հոգեկան զարգացման մակարդակը, նրա ուժեղ և թույլ կողմերը, կրթության կազմակերպման առանձնահատուկ պայմանները:
- *Գնահատում սովորելու համար (ուսուցանող գնահատում):* Գնահատման այս ձևը նպատակ ունի բարելավելու երեխայի ուսումնառության գործընթացը: Այն իրականացնում է ուսուցիչը և կրում է շարունակական բնույթ:
- *Երեխայի կրթական մակարդակի ամփոփիչ գնահատում:* Այս տիպի գնահատումը նպատակ ունի պարզելու, թե ինչքանով է երեխան յուրացրել կրթական ծրագիրը, և որքան է նրա գիտելիքների մակարդակը:

Սովորողի ուսումնառության ունակությունների բացահայտումն ընդգրկում է հետևյալ փուլերը՝

- դիտարկում
- կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտում (մանկավարժահոգեբանական հետազոտման միջոցով)
- կարողությունների գնահատում, անհատականացված պլանավորում

[3] Հանրակրթական պետական չափորոշիչ, 9, կետ 37

Գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝

- օբյեկտիվություն
- արդարություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն

Անդրադառնանք գնահատման որակի չափանիշներից հուսալիությանն ու հիմնավորվածությանը։

Հուսալիությունը վերաբերում է գնահատման հետևողականությանը։ Հուսալի գնահատականն այն է, որը հետևողականորեն նույն արդյունքներն է գրանցում աշակերտների նույն (կամ նման) խմբի հետ։ Հուսալիության վրա ազդում են տարբեր գործոններ՝ ներառյալ երկիմաստ հարցերը, հարցաթերթիկներում պատասխանի չափազանց շատ տարբերակները, անորոշ տրված հրահանգները և վատ ներկայացված օբյեկտները։

Ավանդաբար, գնահատման հուսալիությունը հիմնվում է հետևյալի վրա.

1. Ժամանակավոր կայունություն՝ փորձարկման կատարողականը համեմատելի է երկու կամ ավելի առանձին դեպքերում։

2. Զևի համարժեքություն՝ քննվողների կատարողականը համարժեք է նույն բովանդակության վրա հիմնված տարբեր փորձարկումներին։

3. Ներքին հետևողականություն՝ փորձարկման պատասխանները համընկնում են հարցերին։ Օրինակ՝ հարցման ժամանակ հարցվողներին խնդրվում է գնահատել տեխնոլոգիայի նկատմաբ վերաբերմունքը, սպասվում են հարցի հետևյալ պատասխանները.

- «Ես առհասարակ շատ բացասական եմ վերաբերվում համակարգիչներին»։
- «Ինձ հաճելի է համակարգիչներ օգտագործել[4]։

[4]Образцов П. И. Методы и методология психолого-педагогическогоисследования. — СПб.: Питер, 2004, с. 26-33.

Հիմնավորված գնահատականն այն է, որը չափում է այն, ինչ նախատեսվում է չափել: Գնահատման հիմնավորվածությունը, ընդհանուր առմամբ, չափվում է հետևյալ կատեգորիաներում՝ քննությունների ուսումնասիրության միջոցով.

- Բովանդակություն: Արդյո՞ք թեստի բովանդակությունը չափում է նպատակները:
- Չափանիշ: Արդյո՞ք միավորները փոխկապակցված են ապագա ձեռքբերումների հետ, (օրինակ՝ 4 -րդ դասարանի ընթերցանության թեստի բարձր միավորները ճշգրիտ կանխատեսու՞մ են ապագա դասարաններում ընթերցանության հմտությունները):

Լավ գնահատականն ունի և՛ հիմնավորվածություն, և՛ հուսալիություն, գումարած որակի այլ հատկանիշներ: Գործնականում, գնահատումը հազվադեպ է ամբողջովին հիմնավորված կամ լիովին հուսալի: Քանոնը, որը սխալ է չափում, միշտ էլ նույն (սխալ) չափումները ցույց կտա: Այն շատ հուսալի է, բայց ոչ այնքան հիմնավոր: Պատահական անցորդներին ժամը հարցնելը՝ առանց ժամացույցին նայելու, երբեմն օգտագործվում է որպես հուսալի, բայց ոչ այնքան վստահելի գնահատման օրինակ: Անհատների տված պատասխանները տարբեր կլինեն, բայց պատասխանների միջինը, հավանաբար, մոտ կլինի իրական ժամանակին:

ՈՒսումնական գործընթացի արդյունքների գնահատումը իրականացվում է 10-միավորային սանդղակով: Դրական գնահատական են համարվում 4-10 միավորները: Բացի 10-միավորային համակարգից՝ ուսումնական գործընթացում կիրառվում են նաև գնահատման որակական եղանակներ՝ բնութագրային և ստուգարքային: Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր: Առաջին դասարանում ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի աճի բնութագիր: Միավորներով և ստուգարքային գնահատումը կիրառվում է սկսած երրորդ դասարանից: Տարրական դպրոցն ավարտողը ուսումնական տարվա վերջին լրացնում է հատուկ մշակված հարցարան, որը հնարավորություն է ընձեռնում պարզելու ուսումնական գործընթացի արդյունքնում նրա ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ինչպես նաև մտագործունեության մակարդակը: Այս ստուգումների

արդյունքներն ունեն միայն տեղեկատվական բնույթ։ Չնավորված արժեքային համակարգը և վերաբերմունքը միավորային համակարգով չի գնահատվում։

Նոր ժամանակներն իրենց հետ բերում են նոր զարգացումներ, նոր մարտահրավերներ ու նոր հիմնախնդիրներ։ Այս համատեքստում արդիականացման փուլում է նաև գնահատման համակարգը։ Կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք կիրառվելու են առաջիկա ուսումնական տարում։ Դրանք են՝

- Քանակական գնահատման համար կիրառվում է 10-միավորային սանդղակ, որտեղ որևէ թիվ անվանաբար գնահատական չի համարվում, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ[5]։
- Չնավորող գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը[6]։
- 1-4 դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում։ Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգի[7]։
- Միավորային գնահատումը կիրառվում է սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից[8]։
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների քանակական ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ ԱՈԻՊ-ի՝ 10-միավորային սանդղակով[9]։

[5] Հանրակրթական պետական չափորոշիչ, 9, կետ 39
[6] նույն տեղում, կետ 41
[7] նույն տեղում, կետ 44
[8] նույն տեղում, կետ 45
[9] նույն տեղում, կետ 53




Սովորողների առաջադիմության, նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների, գնահատման համակարգն առավել ամբողջական, տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով առաջարկվում է հետևել ամերիկացի նշանավոր հոգեբան և մանկավարժ Բենջամին Բլումի դասակարգմանը: Եթե կրթության առջև դրված են որոշակի նպատակներ, ապա գնահատվում է այդ նպատակադրումների իրականացման աստիճանը: Այդ իսկ պատճառով էլ Բլումի դասակարգումը կարելի է դիտել որպես գնահատման հիմնաքար[10]:

[10] Հայոց լեզու և գրականություն«Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու», 2007թ., էջ 5




Հանրապետության գնահատման համակարգում առաջնային և կարևոր մաս է կազմում ընթացիկ գնահատումը: Նոր հայեցակարգի համաձայն՝ ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝ *միավորային և ձևավորող*:

Ստորև աղյուսակի ձևով ներկայացվում են միավորային և ձևավորող գնահատման տարբերությունները:

| **Միավորային** | **Ձևավորող** |
|---|---|
| • իրականացվում է ուսուցման փուլի ավարտին<br>• իրականացնում է միայն ուսուցիչը<br>• արդյունքում տրվում է առաջադիմության թերթիկ<br>• ամրագրվում է ուսուցման փուլի արդյունքը<br>• գնահատվում է սովորածը ստուգելու նպատակով և 1-10 միավորային սանդղակով<br>• հիմնականում անհատական աշխատանք է<br>• հարցադրումները, առաջադրանքները հիմնականում ունեն որոշակի լուծում, պատասխան և արժեք | • իրականացվում է ուսուցման ողջ ընթացքում<br>• գնահատմանը մասնակցում են ուսուցիչն ու աշակերտը<br>• բացահայտվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը<br>• բարելավվում է ուսուցման գործընթացը<br>• գնահատում է սովորեցնելու նպատակով և իրականացվում է տարբեր ՁԳ գործիքներով<br>• համագործակցության, խմբային աշխատանքների, քննարկումների բնույթ է կրում<br>• մեծ տեղ են տրվում բաց հարցերին, ընդարձակ շարադրանք պահանջող առաջադրանքներին |

Միավորային գնահատման համակարգը տարիներ շարունակ գործարկվել է սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքներն ամրագրելու համար: Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքային ձևավորման, այն իրականացվում է քանակական(միավորային) և ձևավորող(ուսուցանող) ձևերով դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով[11]:

Ավանդական դասին շեշտը դրվում է միավորային գնահատման վրա, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին օգտագործվում են գնահատման տարբեր մոտեցումներ, շեշտը դրվում է ձևավորող գնահատման վրա[12]: Ձևավորող գնահատման գործընթացում օբյեկտը ոչ թե սովորողն է, այլ նրա գործունեությունը: Ուստի ձևավորող գնահատումը պլանավորելիս ուսուցիչը պետք է ապահովի հետևյալ 5 բաղադրիչների կիրառումը




[11] ՀՀ Կառավարության՝ 08. 04. 2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
[12] «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսգրքույկ, Երևան,2020:

# ԳԼՈՒԽ 2
# ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Գնահատման համակարգի զարգացման ժամանակակից փուլում նկատելի է ուսուցչի գնահատումից սովորողի մասնակցությամբ գնահատմանն անցման միտումը: Գերխնդիր է դարձել այն հարցադրումը, թե ինչ եղանակներով և մեթոդներով է հնարավոր զարգացնել սովորողի ինքնուրույնությունը, տեղեկատվական գործունեությունը, ձևավորել հետաքրքրություն կրթության նկատմամբ և, ի վերջո, ինչպես է հարկավոր գնահատել սովորողին: Կարծում եմ, որ առարկայի դասավանդման ընթացքում կարելի է շեշտադրել ձևավորող գնահատումը և դրա գործիքները: Այս կերպ սովորողին ազատում ենք կաղապարներից, մենք էլ դուրս ենք գալիս սովորողի գիտելիքն ու որակական հատկանիշները միավորների վերածելու գործընթացից: Լավ արդյունքներ ունենալու տեսանկյունից մեծ նշանակություն ունեն նաև այն դասերը, որոնք ընթանում են միջառարկայական և ներառարկայական կապերի միջոցով:

Այժմ փորձարարական այս հատվածում ներկայացնենք գնահատման մի քանի օրինակներ: Փորձարարական դասի թեման է «Բառերի տեսակները՝ ըստ իմաստի և ձևի հարաբերության. հոմանիշներ»:(Տե՛ս դասի պլան 1)

Դասաժամը սկսեցի տնային աշխատանքների ստուգումով: Հանգամանորեն ստուգելուց, շտկումներ կատարելուց հետո հարցերով ստուգեցի հին նյութի յուրացումը և անցում կատարեցի նոր նյութի հաղորդմանը: Քանի որ սովորողները միջին դպրոցում ծանոթանում են բառերի տեսակներին՝ ըստ իմաստի և ձևի հարաբերության, ուստի ներածական զրույցից հետո հայտորոշիչ թեստի միջոցով վեր հանեցի սովորողների նախնական գիտելիքները:

**Հայտորոշիչ թեստ**

1.Հոմանիշ են կոչվում իմաստով մոտ, բայց ձևով տարբեր բառերը:

ա) ճիշտ է բ) սխալ է

2. Հոմանիշներ կարող են կազմվել գոյականից, թվականից, բայից, ածականից:

ա) ճիշտ է բ) սխալ է

3.Հոմանշային շարքի բառերը կարող են լինել տարբեր խոսքի մասեր:

ա) ճիշտ է բ) սխալ է

4.Հոմանիշները ոճական տարբերություն չեն դրսևորում:

ա) ճիշտ է բ) սխալ է

5.Հոմանիշները կարող են ունենալ դրական և բացասական իմաստներ:

ա) ճիշտ է բ) սխալ է

6. Հոմանիշ կարող են լինել նաև ածանցները:

ա) ճիշտ է բ) սխալ է

7.Հոմանշային շարքի անդամները ցույց են տալիս նույն առարկայի, հատկանիշի, գործողության տարբեր աստիճանները, ուժգնությունը:

ա) ճիշտ է բ) սխալ է

8. Նույնանիշ չեն կարող կոչվել իմաստով նույնական հոմանիշները:

ա) ճիշտ է բ) սխալ է

Հայտորոշիչ թեստի ստուգումն իրականացրի զույգերով: Նախ բացեցի գրատախտակին փակցված պաստառը,որի վրա նշված էր ճիշտ պատասխանները, ապա զույգերը, միմյանց փոխանցելով հարցաթերթիկները, սկսեցին ստուգել: Նախնական հայտորոշիչ թեստի վերլուծության պատկերը դիագրամի տեսքով հետևյալն է՝

- 8 հարցից 7 ճիշտ պատասխան – 2 աշակերտ – 10%
- 8 հարցից 6 ճիշտ պատասխան – 3 աշակերտ – 15%
- 8 հարցից 4 ճիշտ պատասխան – 8 աշակերտ – 40%
- 8 հարցից 2 ճիշտ պատասխան – 7 աշակերտ – 35%




Այս ամենից հետո համառոտ ներկայացնում եմ բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության և տալիս ակնարկային բնութագիր: Ապա դասարանը

բաժանում եմ խմբերի և «ԳՈՒՍ» մեթոդով սկսում են ուսումնասիրել թեման։ Տրվում է ժամանակ նյութի յուրացման և ներկայացման համար։ Համապատասխան ժամանակահատվածը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են դասի թեման՝ միմյանց շարունակելով։

**Առաջին խումբը** պատմում է, որ հոմանիշ են կոչվում ձևով տարբեր, սակայն նույն կամ մոտ իմաստ ունեցող բառերը, ինչպես՝ ցանկանալ-կամենալ, կատար-գագաթ։ Իմաստով նույն, բայց ձևով տարբեր բառերը կոչվում են նույնանիշներ, ինչպես՝ ծաղրել-ծանակել, այտ-թուշ, հեռուստացույց-պատկերասփյուռ։

**Երկրորդ խումբը** ներկայացնում է, որ մյուս հոմանիշներն արտահայտում են մոտ կամ նման իմաստ, ինչպես՝ հնամենի-հնօրյա, աղքատ-կարիքավոր, նշում են, որ հոմանիշային շարքի առաջին անդամը կոչվում է հիմնաբառ և հոմանշային շարքի միավոր կարող են դառնալ նաև հոմանիշ դարձվածքները, ինչպես՝ խնդրել-ոտքերն ընկնել։

**Երրորդ խումբն** էլ ներկայացնում է դասի շարունակությունը՝ նշելով, որ հոմանիշներ կազմվում են բոլոր խոսքի մասերից, բացի թվականներից։ Ավելացնում են, որ հոմանշային շարքի միավորները պարտադիր պետք է միևնույն խոսքի մասի բառեր լինեն։ Օրինակ՝ հոմանիշ չեն վարդագույն, շառագույն և կարմրել բառերը։

**Չորրորդ խումբը** ներկայացնում է՝ ասելով, որ հոմանիշները դրսևորում են իմաստային զանազան տարբերություններ.

ա) տեսակային (քամի, խորշակ, բուք)

բ) աստիճանական (համակրել, սիրել, երկրպագել)

գ) դրական կամ բացասական երանգավորմամբ (ավետիս և գույժ, ձգտում և նկրտում)

**Հինգերորդ խումբն** էլ ներկայացնում է, որ հոմանիշները դրսևորում են նաև ոճական տարբերություններ.

ա) արտահայտչական (թմբլիկ և գեր)

բ) գործառական (գեղեցիկ, գողտրի, աղվոր)

Խմբերի աշխատանքները ներկայացնելուց հետո, ընդհանրացնում եմ թեմայի առանցքային կետերը՝ նշելով, որ առանց հոմանիշների խոսքն անշուք է, միապաղաղ և ձանձրալի, ուստի պետք է անընդհատ լրացնել հոմանիշների պաշարը և, որ ամենակարևորն է, հմտորեն գործածել դրանք։ Այս ամենից հետո խմբերին

հանձնարարում եմ կառուցել հոմանիշների գծակարգը՝ թեմայի յուրացումն գործնականում կիրառելու նպատակով։




Դասը պատմելուց և գծագիրը կազմելուց հետո թեման ընդհանրացնելու նպատակով խմբերից յուրաքանչյուրին հանձնարարում եմ մեկական վարժություն։

1.Ընդգծի՛ր փակագծերում գրված բառի 5 հոմանիշ.

ա) լեցուն, արգավանդ, հուռթի, հոլանի, անհագուրդ, պարարտ, ջրարբի, արգասավոր, բերքատու, բարի

բ) թովել, թոթովել, դյութել, պաշարել, հմայել, դրդել, գրավել, մայել, տվայտել, զմայլել, պարուրել, հրապուրել

գ) խիզախ, անեղծ, քաջ, սրտակից, տատամսոտ, արի, անվարան, կտրիճ, անվեհեր, անգայթ(համարձակ),

դ) կենսուրախ, ժուժկալ, խենթ, ծուռ, աշխույժ, սիրալիր, կայտառ, կորովի, ժիր, համակ, ուրախ, զգոն

2.Հետևյալ հոմանիշները դասավորի՛ր ըստ աստիճանականության և յուրաքանչյուրով նախադասություն կազմիր.

ա) զայրանալ, մոլեգնել, հուզվել, վախենալ, երկյուղել, սարսափել, փոթորիկ, քամի, զեփյուռ

3. Գրի՛ր կապույտ բառի տասը հոմանիշ և դրանք գործածիր համապատասխան բառակապակցությունների մեջ։

4. Գրի՛ր իմաստային հոմանիշներ և դրանք գործածիր նախադասությունների մեջ։

5. Հատվածը հարստացրո՛ւ տրված բառերի հոմանիշներով։

Անտառը փոխվում էր։ Արեգակը նկարչի պես գունավորում էր ծառերի կատարները։ Անտառը նազում էր զեփյուռից։ Քիչ անց նրա անդորրը խախտվեց։ Քամին ներխուժեց անտառ, իրար զարկեց ծառերի ճյուղերը, նրա սուլոցը խլացրեց առվակի երգը։ Հետո տերևներն իրենց վերջին շուրջպարը բռնեցին, պտույտներ արեցին օդում և հետևելով քամուն՝ անհետացան անտառի խորքում։

Հնօրյա, օրըստօրե, ոսկեճաճանչ, վարժ, բարձրաբերձ, տերևաշատ, գույնզգույն, հոգեթով, փոթորկաբեր, կատաղի, խոխոջուն, խելագար, հուսաբեկ։

Աշխատանքներն ավարտելուց հետո սովորողները ներկայացնում են իրենց գրածները, գնահատում եմ(գնահատում բառային բնութագրումներով) և հանձնարարում հաջորդ աշխատանքը։

Յուրաքանչյուր խումբ գրականության դասանյութերից վերհիշում է հատված, որը հագեցած կլինի հոմանիշներով, գրում և փոխանցում է կողքի խմբին։ Հաջորդ քայլին խմբերը դուրս են գրում հոմանշային զույգերը՝ նշելով ենթատեսակները։ Այս առաջադրանքն էլ ավարտելուց հետո ստուգում եմ աշխատանքների ճշտությունը,շտկումներ կատարում և գնահատում սովորողներին։

Կատարում ենք անդրադարձ՝ լրացնելով «ԳՈՒՍ» մեթոդի «սովորել եմ» բաժինը։ Այս փուլի ընթացքում բացահայտում եմ սովորողների ձեռքբերումները և բացթողումները, դժվարությունները և իրավիճակի վերլուծությունից հետո հաջորդ դասի համար մշակում գործողություններ՝ թերությունները շտկելու նպատակով։ Անդրադարձի ժամանակ հնչեցնում եմ նմանատիպ հարցեր. «Ո՞ր մասն էր ամենաբարդը։ Արդյոք դուք բացահայտեցի՞ք մի տեսակետ, որը ձեզ համար անակնկալ եղավ։ Ի՞նչն եք լավ հասկացել։ Ի՞նչն եք վատ հասկացել»։

Հանձնարարում եմ սովորողներին կատարել գնահատում և ինքնագնահատում հետևյալ աղյուսակների միջոցով.

Ինքնագնահատման ռուբրիկ

| | Գնահատման չափանիշ | Գերազանց | Բավարար | Կատարելա-գործման կարիք ունի |
|---|---|---|---|---|
| 1 | Ինչպե՞ս եմ կատարել իմ խմբային աշխատանքը։ | | | |
| 2 | Կատարե՞լ եմ, արդյոք, ներկայացված պահանջները։ | | | |
| 3 | Արդյոք տեղավորվե՞լ եմ աշխատանքի՝ ինձ հատկացված ժամանակի մեջ։ | | | |
| 4 | Արդյոք օգնե՞լ եմ թիմակիցներիս։ | | | |
| 5 | Արդյոք հաշվի՞ եմ առել թիմակիցներիս կարծիքը։ | | | |
| 6 | Հասե՞լ եմ, արդյոք, փոխըմբռման թիմակիցներիս հետ։ | | | |

Գնահատման ռուբրիկ

| Ի՞նչ արեցինք | Ինչպե՞ս | Ինչո՞ւ |
|---|---|---|
| Կատարած գործողությունները | Կատարման համառոտ ընթացքը | I և II սյունակների գրվածների բացահայտում, իմաստավորում |
| ա) | բ) | գ) |

Համեմատվում է սովորողների ինքնագնահատման և ուսուցչի գնահատականի համարժեքությունը։ Այստեղ մանրամասնում եմ՝ նշելով, որ կարևորել եմ նրանց մտքերն արտահայտելու ճշտությունը, լակոնիկությունը, աշխատանքների գնահատման գործընթացին առավելագույն մասնակցությունը։ Ապա հարցնում եմ սովորողներին, թե գնահատման միասնական համակարգի կիրառումը արդյոք տվե՞ց իր արդյունքը, դրակա՞ն էր վերջնարդյունքը։ Սովորողները նշում են, որ ամեն ինչ շատ պարզ ու թափանցիկ էր, օբյեկտիվ ու անկողմնակալ։

Հանձնարարում եմ տնային աշխատանքը, իսկ հաջորդ դասաժամին իրականացնում եմ միավորային գնահատում (10 միավորանոց սանդղակով) ամփոփիչ թեստային առաջադրանքի միջոցով։ Ամփոփիչ թեստի ստուգման արդյունքներն արտացոլում են գիտելիքների մակարդակը «Հոմանիշներ» թեմայից,որն ունեցավ հետևյալ պատկերը՝

- 9մվ – 7 աշակերտ – 35%
- 8մվ – 8 աշակերտ – 40%
- 7մվ – 3 աշակերտ– 15%
- 5մվ – 2 աշակերտ – 10%



# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Գնահատման տարբեր եղանակները, դրանց առավելություններն ու թերությունները» թեման, եկել եմ հետևյալ եզրահանգումների.

- Այս հետազոտության շրջանակում, անդրադառնալով գնահատման համակարգին, կիրառելով գնահատման տարբեր գործիքներ, եկա այն եզրահանգման, որ գնահատումը մի համակարգ է, որը ժամանակի մարտահրավերների հրամայականով գտնվում է անընդհատ փոփոխությունների մեջ:
- Գնահատումն այսօր արդեն չի կարելի դիտել որպես ուսուցման պրոցեսի մի հավելված, այն համալիր կրթական գործընթաց է, որ կոչված է տեղեկություններ տալու ուսուցման որակի և նրա զարգացման դինամիկայի մասին:
- Մեր հանրակրթության մեջ գնահատման նոր համակարգի ներդրումը ենթադրում է «գնահատում» հասկացության իմաստի ընդլայնում:
- Կրթական հանրության մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ ուսումնական գործունեության արդյունքների գնահատումը սոսկ առկա գիտելիքների ստուգման ու վավերացման գործառույթ չունի: Իմ կարծիքով, այն հնարավորություն ունի սովորողների մեջ ձևավորելու ուսումնական կայուն մոտիվացիա, կարող է ուսուցման գործընթացը դարձնել վերահսկելի, սատարել ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորել ժամանակակից մարդուն անհրաժեշտ մի շարք որակներ:
- Գնահատման նոր համակարգը պիտի օգնի սովորողին բացահայտելու իր ուսումնական ներունակ հնարավորությունները, սատարի նրա ինքնուրույնության կայացմանը, զարգացմանն ու ինքնաիրացմանը:
- Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի սուբյեկտ:

- Սովորողը իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա, թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակներին:
- Դասավանդման ընթացքում կիրառելով գնահատման տարբեր եղանակներ, մշտադիտարկելով արդյունքներն ու վերլուծելով սովորողների կարծիքները՝ կարող եմ պնդել, որ ձևավորող գնահատման համակարգն իր գործիքներով ավելի է հետաքրքրել սովորողներին՝ բարձրացնելով վերջիններիս սովորելու, նոր գիտելիք, կարողություններ ու հմտություններ ամբարելու ցանկությունը:
- Գնահատման տարբեր եղանակների կիրառումը ուսումնական գործընթացում ամրապնդում է աշակերտների հավատը սեփական ուժերի նկատմամբ և բարելավում կրթության որակը:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Հայոց լեզու և գրականություն «Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու», 2007։
2. Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004։
3. Հանրակրթական պետական չափորոշիչ։
4. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում «Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին»։
5. «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսգրքույկ, Երևան2020։
6. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան,2005։
7. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005։
8. Образцов П. И. Методы и методология психолого-педагогического исследования. — СПб.: Питер, 2004։

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ԴԱՍԱՊԼԱՆ 1

**Ուսուցիչ՝** Ա. Սարգսյան

**Դասարան՝** 10-րդ

**Առարկա՝** Հայոց լեզու

**Թեմա՝** Բառերի տեսակներն ըստ իմաստի և ձևի հարաբերության. Հոմանիշներ

**Դասիտիպը** ՝համակցված դաս

**Նպատակներ՝**

- ընկալել բառերի դասակարգման սկզբունքները՝ ըստ իմաստի և ձևի
- խորացնել գիտելիքները հոմանիշների բառակազմական առանձնահատկությունների շուրջ
- ընկալել հոմանիշների ոճական արժեքը
- ձևավորել բանավոր և գրավոր խոսք կազմելու կարողություն՝ հոմանիշները գործածելով իմաստային և ոճական տարբեր նպատակներով

**Վերջնարդյունքներ՝**

- կիմանա և կտարբերակի բառերի տեսակները՝ ըստ իմաստի և ձևի հարաբերության
- կիմանա հոմանիշների կազմության և առաջացման ուղիները, նրա ոճական առանձնահատկությունները
- կկարողանա առանձնացնել բառերի տեսակները՝ ըստ իմաստի հարաբերության (իմաստային և ոճական) հոմանիշներ
- հոմանիշները ոճական տարբեր նպատակներով կկիրառի բանավոր և գրավոր խոսքում
- կարժևորի հոմանիշների դերը և նշանակությունը խոսք կառուցելիս
- կդրսևորի ճանաչողական, վերացարկման, դիտարկման երևույթների նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում
- կլսի խոսակցին, կաշխատի ընդհանուր նյութերով, կգնահատի և կարժևորի իր դերը խմբային աշխատանքում

**Ձևավորող կարողունակություն՝**

- լեզվական գրագիտություն

- սովորել սովորելու կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

**Հիմնական հասկացություններ՝** հաղորդակցում, լեզվական համակարգ, բառագիտություն, իմաստային և ոճական հոմանիշներ

**Միջառարկայական և ներառարկայական կապեր՝** մայրենի, գրականություն, նկարչություն

**Տնային աշխատանք՝** առաջադրված տեքստերում գտնել իրար հակադրված հոմանիշ բառերը և բացատրել դրանց իմաստային տարբերությունները

**Կիրառվող մեթոդներ՝** ներածական զրույց, կարճ դասախոսություն, «ԳՈՒՍ», համեմատություն, զույգերով և խմբային աշխատանք, գծակարգ

**Անհրաժեշտ նյութեր՝** գրատախտակ, քարտեր, տետր, դասագիրք, նշագրիչներ, կպչուն թղթեր

**Տևողությունը՝** 2 դասաժամ

## ԴԱՍԱՊԼԱՆ 2

**Ուսուցիչ՝** Ա. Սարգսյան

**Դասարան՝** 6-րդ

**Առարկա՝** Մայրենի

**Թեմա՝** Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վեպից հատված. բովանդակությունը և դիպաշարը

**Նպատակներ՝**

- գաղափար տալ տեքստում պատկերված ինքնակենսագրական պատումի, կորուսյալ հայրենիքի, հուշի, հայրենի ավանդույթների մասին
- ընդհանուր պատկերացում տալ դիպաշարի մասերի վերաբերյալ
- նպաստել հատվածները ստեղծագործաբար և պատկերավոր ներկայացնելուն, սեփական կենսագրական պատում ստեղծելուն

**Խնդիրներ՝**

- ընդհանրություններ գտնել վերնագրի և բնագրի միջև, առանձնացնել հիմնական գաղափարն արտահայտող հատվածները և վերնագրել
- նշել դիպաշարի մասերի բնութագրիչ հատկանիշները, գտնել դրանք տվյալ հատվածում
- բանավոր կամ գրավոր որևէ կերպարի անունից ներկայացնել տվյալ հատվածը այլ վերջաբանով՝ կատարելով նկարագրդումներ, ընտրել համապատասխան մեղեդի

**Վերջնարդյունքներ՝**

- կկարողանա բացահայտել տեքստի գլխավոր գաղափարը, ներկայացնել դիպաշարի մասերը՝ ըստ տվյալ հատվածի
- կկարողանա հատվածը ներկայացնել տարբեր կերպարների անունից, ստեղծագործական հավելումներ անել
- կկարողանա առանձնացնել կերպարների արտաքինը նկարագրող, բնավորության գծերը բացահայտող պատկերները՝ համեմատելով իր հարազատների հետ՝ շեշտելով ընդհանրությունները

- կկարողանա հորինել հերոսների բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ կամ նկարել նրանց
- ստեղծել սեփական ինքնակենսագրության պատառիկներ

**Ձևավորող կարողունակություն՝**

- լեզվական գրագիտություն
- սովորել սովորելու կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ՝** անհատներ և հարաբերություններ, ժամանակ և տարածություն, պատճառ և հետևանք

**Միջառարկայական և ներառարկայական կապեր՝** հայոց լեզու, կերպարվեստ, երաժշտություն, հայոց պատմություն

**Տնային աշխատանք՝** վարժ և արտահայտիչ կարդալ, պատմել, ստեղծել ինքնակենսագրական պատումի պատառիկներ,

**Կիրառվող մեթոդներ՝** ներածական զրույց, մտագրոհ, բանալի բառեր, կրկնակի գրառումների օրագիր, քառաբաժան, բառային և տեքստային աշխատանք

**Անհրաժեշտ նյութեր՝** դասագիրք, Թոթովենցի դիմանկար, տետր, նշագրիչներ, կպչուն թղթեր

**Տևողությունը՝** 2 դասաժամ